ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ, ԿԱՊԻ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

"25" 04 2018 թ. N 293-Ա

ք.Երևան

«ԵՐԵՎԱՆ – ՆՈՅԱԿԵՐՏ» № 483 ՄԻՋՄԱՐԶԱՅԻՆ ՄԻԿՐՈԱՎՏՈԲՈՒՍԱՅԻՆ ԵՐԹՈՒՂՈՒ ՉՎԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՈՒՂԵԳԻԾԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Ավտոմոբիլային տրանսպորտի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ կետի դրույթներով.

Հրամայում եմ՝

1. Հաստատել՝ «Երևան – Նոյակերտ» № 483 միջմարզային միկրոավտոբուսային երթուղու չվացուցակը և ուղեգիծը՝ համաձայն հավելվածի:
2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության տրանսպորտի և կապի նախարարի 2013 թվականի մայիսի 13-ի № 204–Ա հրամանի № 12 հավելվածը:
3. «Հայավտոկայարան» փակ բաժնետիրական ընկերության տնօրեն Ա. Գարբուզյանին՝ մեկ աշխատանքային օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին համապատասխան իրականացնել միջմարզային միկրոավտոբուսային երթուղիների սպասարկման պայմանագրերում սույն հրամանից բխող փոփոխություններ:
4. ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության աշխատակազմի հասարակության հետ կապերի բաժնի պետ Ս. Մամյանին սույն հրամանով հաստատված չվացուցակը տեղադրել ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության կայք էջում:
5. Սույն հրամանի կատարման նկատմամբ վերահսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարի տեղակալ Ա. Սիմոնյանին:

Նախարարի պաշտոնակատար **Վ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ**

Հավելված №
ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական
տեխնոլոգիաների նախարար
«25» 04 2018թ. №293-Ա հրամանի

ՉՎԱՅՈՒՑԱԿ

ԵՐԵՎԱՆ – ՆՈՅԱԿԵՐՏ

№ 483

ՄԻՋՄԱՐԶԱՅԻՆ ՄԻԿՐՈԱՎՏՈԲՈՒՍԱՅԻՆ ԵՐԹՈՒՂԻ

Երթուղու երկարությունը - 40,9 կմ
Երթի տևողությունը՝ 1 ժամ 10 րոպե
Սկզբնակետ – Երևանի «Հարավային» ԱԿ
Վերջնակետ – գ. Նոյակերտ
Տրանսպորտային միջոցների քանակը՝ 1
Օրվա ընթացքում կատարվող երթերի քանակը՝ 4 (շրջապտույտների քանակ 2)
Երթերի կատարման օրերը՝ շաբաթվա բոլոր օրերին

Երթուղու սպասարկման ժամանակաշրջանը՝ հունիսի 1-ից մինչև դեկտեմբերի 1-ը

	Շարժման ուղղությունը					
	Երևան – գ. Նոյակերտ			գ. Նոյակերտ - Երևան		
	Կանգառները			Կանգառները		
	«Հարավային» ԱԿ		գ. Նոյակերտ	գ. Նոյակերտ		«Հարավային» ԱԿ
	Ժամանում նստեցման	Մեկնում	Ժամանում	Ժամանում նստեցման	Մեկնում	Ժամանում
1	10:45	11:00	12:10	12:45	13:00	14:10
2	15:15	15:30	16:40	16:45	17:00	18:10

Երթուղու ուղեգիծը՝ Երևանի «Հարավային» ԱԿ – Սևանի փողոց – Գ. Նժդեհի փողոց – Արշակունյաց պողոտա (կանգառի կետ՝ կ/թ Հայրենիք և Աշխատանքի հրապարակ) – Նորագավիթի I –ին փողոց – Մ-3 միջպետական ավտոճանապարհ – գ. Փ. Վեդի - գ. Լուսառատ - գ. Եղեգնավան - գ. Նոյակերտ:

Հետադարձը հակառակ ուղեգծով:

ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական
տեխնոլոգիաների նախարարության
աշխատակազմի ղեկավար Ս. Ամիրխանյան